

ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՄԱՐԴԱԳԱՅԼԻ ԱՌԱՍՊԵԼԸ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ «ԱՂԱՍՈՒ ԽԱՂ»-ՈՒՄ

Խ. Աբովյանի «Աղասու խաղը» ստեղծագործությունը շատ հետաքրքիր է հայ ժողովրդական բանահյուսության հետ կապի տեսանկյունից: Գրական առումով բարձր գնահատվելով¹՝ անտեսվել են նաև նրանում օգտագործված բանահյուսական մի շարք կարևոր նյութեր²: Մեր քննության նյութն այս ստեղծագործության մեջ հանդիպող և թեմային առնչվող այլ աղբյուրներում բացակայող Մարդագայլի մասին առասպելն է³, որի առկայությունը «Աղասու խաղը» չափածո ստեղծագործության մեջ հնարավորություն կտա պարզելու ոչ միայն Խ. Աբովյանին հայտնի պատումի⁴ պլոտետային առանձնահատկությունները, այլև բանահյուսական նյութերն օգտագործելու և մշակելու Աբովյանի սկզբունքները:

Մարդագայլի առասպելի մասին ակնարկներ արել են Ղևոնդ Ալիշանը և Մանուկ Աբեղյանը: Ղ. Ալիշանն արտահայտում է այն միտքը, թե «հուշկապարիկ» բառը լատիներենում կարող էր հասկացվել որպես «մարդագայլ»⁵:

Մ. Աբեղյանը արձանագրում է, որ «Մարդագայլի հավատալիքը տակավին կենդանի է և որոշակի հանգամանքներում ավելի ուժեղ ձևով է երևան գալիս»⁶:

Արամ Ղանալանյանը «Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը» մենագրության մեջ հանգամանորեն ներկայացրել է Խ. Աբովյանի բանահավաքական գործունեության արդյունքում ի մի բերված նյութերը՝ հավելվածով⁷, ինչպես նաև քննել բանահյուսական երկերը մշակելու աբովյանական եղանակները: Ընթերցողին ուղղված «Երկու խոսք»-ում ակնարկում է, որ գրքի հավելվածից դուրս է թողել «Աբովյանի՝ Հաքստիաուզենին և ուրիշներն հաղորդած այն նյութերը, որոնք ո՛չ բո-

¹ Հայ նոր գրականության պատմություն, հ. Ա, Երևան, 1962, էջ 401: Նույնը՝ **Հ. Մուրադյան**, Խաչատուր Աբովյան, Երևան, 1963, էջ 74: **Ն. Մուրադյան**, Աբովյանի պոետիկան, Երևան, 1979, էջ 51:

² Այդ մասին միայն առանձին ակնարկներ արել է Ս. Բազանը (Աբովյանի բանաստեղծական աշխարհը, Երևան, 1971, էջ 355, 361, 384, 402-403): «Աղասու խաղ»-ում Խ. Աբովյանն օգտագործել է նաև այլ ավանդություններ, գրույցներ (օրինակ՝ Ապրանքափոսի (էջ 100-101), սիրահարների քար դառնալու (էջ 174-175), արեգակի և լուսնի մասին (էջ 91), անձրևաբեր վիշապների (էջ 91-92) ավանդությունները, որոնք այլ ուսումնասիրության նյութ են. **Խ. Աբովյան**, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով այսուհետև՝ Երկեր, հ. II, Երևան, 1948:

³ Նույն տեղում, էջ 94-97:

⁴ «Աղասու խաղ»-ում տեղ են գտել այս գրույցի երկու տարբերակ, որոնց մասին խոսք կլինի համապատասխան տեղում:

⁵ **Ղ. Ալիշան**, Հին հուատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ-Ս. Ղազար, 1895, ծան. 1, էջ 186. «Աստուծո տեղ (իմա՝ հուշկապարիկների-Լ.Հ.) յոյն բնագիրն Իշագուլ կ'ըսէ... Լատինն այլ այսպէս, կամ Սատիւր կամ Սիրեն եւ կամ Lamia, որ կըրնայ Մարդագայլ կոչուիլ...»:

⁶ **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 94-95: Մարդագայլի մասին առասպելի մանրամասն քննությունը տե՛ս **Ս. Հարությունյան**, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 281-286:

⁷ **Ա. Ղանալանյան**, Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1941, հավելվածը՝ էջ 65-126:

վանդակության և ո՛չ էլ արվեստի տեսակետից առանձին արժեք չեն ներկայացնում, և բերված են աղճատ ու պռատ վիճակում»⁸: Այդ շարքում է նաև խնդրո առարկա գրույցը «Կերպարանափոխություն»⁹ վերնագրով, որի առաջին և կարևոր աղբյուրը Ավգուստ Հաքստհաուզենի «Transkaukasia»¹⁰ աշխատությունն է: Հեղինակը գովեստներով է արտահայտվել Խ. Աբովյանի մասին. «Ցավոք այդ ուղղությամբ (իմա՝ բանահավաքչության- Լ. Հ.) ոչինչ հավաքված չէ, և մենք ունենք սակավ, մակերեսային նշումներ: Իմ ամբողջ մեջբերածի համար ես հատկապես պարտական եմ Աբովյանին, նրա հորեղբորը և Պետրոս Նեյին»¹¹: Հաքստհաուզենը այս գրույցի համար պատմողի անուն չի հիշատակում: Սակայն այս, ապա նաև Ապրանքափոսի¹² մասին պատմող գրույցի առկայությունը «Աղասու խաղ»-ում հուշում են, որ մարդագայլի մասին ևս Աբովյանից լսած պիտի լինեք:

Հաքստհաուզենի աշխատությունը գերմաներենից թարգմանվել է հայերեն՝ հատվածաբար, իսկ ռուսերեն՝ ամբողջությամբ¹³: Խնդրո առարկա գրույցն այստեղ «Die Sage von den Wehrwölfen» վերնագրով է, իսկ ռուսերեն թարգմանության մեջ՝ «ԿոՏՏՏՏՎՈՒ» («Կերպարանափոխություն»): Նկատելի է, որ Ա. Ղանալանյանի հայերեն թարգմանությունը համահունչ է ռուսերեն, այլ ոչ թե գերմաներեն բնագրին: Արտ. Աբեղյանն ավելի ճիշտ է վարվել՝ առասպելի վերնագիրը թարգմանելով գերմաներեն բնագրին համապատասխան ձևով՝ «Առասպել մարդագայլերի մասին»¹⁴, ինչը համահունչ է գրույցի սյուժեին և, բացի այդ, «Մարդագայլ» վերնագիրն ունեն նաև տարբեր ժամանակներում գրաված այս գրույցի՝ առանց բացառության մեզ հայտնի բոլոր հայերեն և գերմաներեն տարբերակները¹⁵:

Մարդագայլի հավատալիքը տարածված է հատկապես սլավոնական և գերմանական ժողովուրդների¹⁶ բանահյուսության մեջ: Սակայն հայկական տարբերակի հիմնական առանձնահատկությունն այն է, որ եթե այլ ժողովուրդների մոտ կերպարանափոխվում են հիմնականում տղամարդիկ և շատ ավելի քիչ՝ կանայք՝ ուտելով հիմնականում միս կամ այլ կենդանիներ, ապա հայ ժողովրդական բանահյուսության մեջ որպես կանոն կերպարանափոխվում են կանայք¹⁷ և ուտում են երեխաների¹⁸: Հայ ժողովրդական բանահյուսության մեջ տարածված սյուժեն հիմնական

⁸ Նույն տեղում, էջ 65:

⁹ Նույն տեղում, էջ 65:

¹⁰ August Freiherrn von Haxthausen, Transkaukasia, Leipzig, 1856, չԳ 322: Закавказский край, Заметки о семейной и общественной жизни и отношений народов, обитающих между Черным и Каспийским морями. Путевые впечатления и воспоминания барона Августа фон-Гакстаузена. ч. I, II, С. П., 1857.

¹¹ Նույն տեղում, էջ, Կ. II, Ժ. 48.

¹² Այս ավանդությունը Հաքստհաուզենը լսել է Խ. Աբովյանից: Ն. տ., էջ 68:

¹³ Ավ. Հաքստհաուզենի գրքի ամբողջական և հատվածական թարգմանությունների մասին մանրամասն տե՛ս, Խ. Աբովյան, Երկեր, Խ. X, 1961, էջ 406:

¹⁴ Արտ. Աբեղյան, Աբովյան և Հաքստհաուզեն, «Հայրենիք», Ե. տարի, Յունուար, Բոստոն, 1927, էջ 144:

¹⁵ Տե՛ս համացանցային կայք, <http://www.pitt.edu/dash/werewolf.html> - Werewolf legends from Germany /այսուհետև՝ Werewolf legends/, translated and edited by D. L. Ashliman, university of Pitzburg, 1997-2002:

¹⁶ Սլավոնների մոտ մարդագայլը հայտնի է՝ Волкодлак, լիտվացիների մոտ՝ «Вилтак», իսկ գերմանացիների մոտ՝ «Werewolf» ձևով: Մանրամասն տե՛ս Мифы народов мира, т. 1, М., 1980, Ժ. 242-243, 236, 233.

¹⁷ Նյութերն ընտրված են «Էմինեան ազգագրական հանդես»-ից (այսուհետև՝ ԿԷԱՀ):

¹⁸ Այս առումով ուշագրավ է հայկական մարդագայլի և հունական Լամիայի գրույցների

գծերով հետևյալն է ¹⁹. Աստված մեղսակիր կանանց պատժում է՝ մարդագայլ դարձնելով: Զրույցներն ակնարկում են, թե Աստված բարկանում է այն կանանց վրա, ովքեր մերկանդամ շրջում են դրսում²⁰: Նրանց վրա երդիկից ընկնում է մորթի, և նրանք գիշերները դառնում են գայլ՝ պարտավորվելով երեխա ուտել 7 տարի շարունակ:

Խ. Աբովյան՝
...Օխտը տարին դեռ չի՝ թամամել.
Ու շատ աշխարհի դեռ նա չի ման եկել
Աստծո հրամանը բոլոր կատարել.
Տարին հազար նա երեխա կերել...
/3391-3394/²¹:

Զրույցներ մարդագայլերի մասին
«Այսպես՝ միայն գիշերները մարդագայլ, իսկ ցերեկները նախկին կինն դառնալով, սրանք յոթն տարի տանջում են և երբ յոթերորդ տարին լրանում է, գայլի մորթիին թռչում է նրանց վրայից և նրանք այլևս մարդագայլ չեն դառնում»²²:

Նրանք անսահման ուժեղ են և անխոցելի: Առանձին պատումներ հայտնում են, թե մարդագայլերը երկար տարածություններ կարող են հաղթահարել շատ կարճ ժամանակում, և նրանց առջև բացվում են բոլոր դռները:

Որ նա գա փակած դուռը բաց կրլի.
Երկաթե դուռն էլ կհալչի, կջարդվի...
Նա օրորոցին՝ որ մոտենում ա,
Թաթասվան՝ ն >երն հենց իրանց ի-
րանց
Բաց են ըլում...
Բայց մարդագեղին՝ ո՛չ որ չի տես-
նում...
Շատ անգամ մարդիկ նրան տեսնում
են (3373-3374)...

«Մարդագեղին ճար չ'ինի, վրեն թուր ու թուանք չի բանի. փակ դռները առաջին կը բացուեն: Մին էլ մարդագեղը շուշուտ կը վազի-մին սհաթումը ըստիան կը գնայ Թաւրիգ. ընդէ ըրխայ կը տանի կ'ուտի, էլիկս ետ կու դառնայ տուն: Ընենց որ տանեցիք ըսկի չեն իմանայ, թէ գնացել է»²³:

Եղևիցն ընկնում. թվանքով խփում

«Ոչ մի զենքով չի կարելի նրանց սպանել և կամ վիրաւորել»²⁴:

նմանությունը: Լամիան Ջևաի սիրուհին էր, որի երեխաներին սպանում է Հերան՝ խանդից դրդված: Լամիան պատսպարվում է մի անձավում՝ վերածվելով արյունաբերու մի գազանի, որը փախցնում և ուտում է երեխաների: Քանի որ Հերան նրան զրկել էր քնից, նա ստիպված թափառում էր գիշերները: Հայկական Մարդագայլի գրույցի հետ ուշագրավ զուգահեռներ ունի նաև Լիլիթի մասին պատմող հրեական լեգենդը. նա կարող էր դառնալ կենդանակերպ չար ոգի, մագոտ էր, վնասում էր նորածիններին, փախցնում է նրանց, խմում արյունը: Նա պատժված էր. օրական պիտի կորցնեք 100-ական երեխա (Мифы народов мира, т. 1, М., 2000, ст. 36, 54): Այլ կարծիքներ՝ Евг. Кагаров, Культъ фетишей, растений и животныхъ въ древней Греции, С. П., 1913, ст. 225.

¹⁹ Զրույցի սյուժեն կներկայացնենք Խ. Աբովյանի «Աղասու խաղ»-ում տեղ գտած տարբերակի համեմատությամբ:

²⁰ ԷԱՀ, հ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 14: Բուլանըխ կամ Հարք գավառ:

²¹ «Աղասու խաղ»-ի համապատասխան քաղվածքի մոտ դրել ենք տողի համարը:

²² ԷԱՀ, հ. Ա, Շուշի, 1985, էջ 370-371: Ջավախք:

²³ Գ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, Ժողովածու, Թիֆլիս, 1891, էջ 35: Աստապատ-ցիների բարբառով:

²⁴ ԷԱՀ, հ. Ա, էջ 370-371:

են,

Բայց թուր ու թվանք նրան չեն վնասիլ... (3377-3379)

Նույնն են ակնարկում նաև գերմանական զրույցները, որոնց մեծ մասը հավելում է, թե մարդագայլերին կարելի է խոցել միայն արծաթե փամփուշտով²⁵:

Բելոռուսները հավատում էին, որ մարդագայլերը կարող են ավերածություններ սփռել: Այդպիսի գայլերին հնարավոր չէ ոչ խփել, ոչ բռնել²⁶:

Նրանք խնամքով թաքցնում են իրենց մորթին, բայց եթե պատահի այնպես, որ մորթին ցանկանան այրել, ապա նրանք հավիտյան տանջանքների կդատապարտվեն՝ նախապես իրենց մորթին փրկելու ամեն ջանք գործադրելով²⁷:

Խրխին էրելիս նա ծվում ա, գոռում

Էրողին խնդրում, լալով աղաչում.

Որ խեղճ գա նրան, խրխին իրան տա. /3388-3390/:

Որոշ զրույցներ հայտնում են, թե մարդագայլի մորթին այրելուց հետո կախարդանքը կվերանա.

Բայց թուփ ու թվանք նրան չեն վնասիլ

Մինչև խրխին չերես, կրակը չձգես /3379-3380/:

«Ասում են, թե եթե կարողանան դրանց մորթին գտնել և վառել, նրանք այլևս *մարդագայլ* չեն դառնայ, սակայն նրանք այդ չեն ցանկանում և լուսադեմին տանում, մորթիները մի ապահով տեղ պահում են»²⁸:

Բնագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ «Աղասու խաղ»-ում Աբովյանը գետեղել է այս առասպելի երկու տարբերակ, որոնք ունեն որոշակի պյուժետային տարբերություններ: Երկրորդ տարբերակում (էջ 95, 3401-3468) մարդագայլն անգուգական ձայնով սարսափազդու անատամ մի պառավ է (3401-3404), որն ապաշխարում է գայլամարդ եղած ժամանակ կատարած իր մեղքերի համար: Նա պատժվել է ոչ թե Աստծու կողմից, այլ հրեշտակի կամքով պատժել է մեղսալի մարդկանց՝ նրանց նորածին երեխաներին ուտելով: Սյուժեի այսպիսի զարգացում մեզ հայտնի տարբերակներում չենք հանդիպել:

Մեկ հրեշտակ էրթիկիցն նրա անունը տվեց

Ինքն էլ զարմացավ՝ որ անուն ասեց.

Խրխին վեր քցեց ու նրան հրամայեց,

Որ օխտը տարի գնա աշխարք ման գա.

Ու չար մարդքերանց հախիցը վեր գա.

Էրեխենքն ուտի, որ նրանք դարձ գան (ընդգծումը մերն է- Լ. Հ., 3410-3415):

Այս տարբերակը ուշագրավ է նաև հետևյալ ակնարկով. այն բանից հետո, երբ մարդագայլն ազատվում է անեծքից, նրա մարմնի վրա միշտ մնում է գայլային որևէ

²⁵ <http://www.pitt.edu/dash/werewolf.html>, - Werewolf legends, "Werewolf of Klein-Krams", "The Werewolf of Jamitz"

²⁶ **Шейн**, Материалы для изучения быта и языка русского населения Северно-западного края, т.3, С.П., 1902, ст. 253 /Հղումը տե՛ս **Յ. Ս. Соколова**, Культ животных в религиях, М., 1972, ст. 103/:

²⁷ ԷԱՀ, հ. ԺԷ, ԹԻՖլիս, 1908, էջ 117-118: Նոր Բայազետի գավառ:

²⁸ Նույն տեղում, հ. Ա, էջ 371:

մաս: Զրույցի մեզ հայտնի տարբերակներից մեկում դա գայլի պոչն է, այնինչ Խ. Արովյանի մոտ գայլային աչքերն են:

Էնպես ձեն ունի, որ խելք ա գնում,
Աչքը գիլի ա, տեսնողն դողում ա,
Սարսափը գալիս, միսը սարսռում.
Մյուս բաներն բոլոր մարդի ա: (ընդգծումը մերն է՝ Լ. Ն., 3404-3407)

«Էդ Սառանին համար կ'ասին թե՛ մարդագեղություն ա արել, խրխին որ երեկ են, պոչը վրեն մնացել էր- պոչը ես իմ աչքովս տեսամ»²⁹:

Բելոռուսները հավատում էին, որ «կախարդը մարդուն դարձնում է գայլ՝ որոշակի ժամանակով, որի սպառվելուց հետո այն նորից դառնում է մարդ. նրա տարբերակիչ առանձնահատկությունը թավացած հոնքերն են և կարմիր աչքերը»³⁰:

Գերմանական մի զրույց հավելում է, թե փայլուն աչքերից բացի գայլամարդու կրծքին և կզակի մոտ կարող են պահպանվել կարմիր մազեր³¹:

Երկրորդ տարբերակի մի ուշագրավ պահ ևս. Խ. Արովյանն ակնարկում է, որ եթե մարդագայլերը վիրավորվում են, ապա նրանց սպիները պահպանվում են սովորական մարդու վերածվելուց հետո ևս:

Թուր, թվանք նրան ոչինչ չի կտրի.
Թե իր գյուլ< լ >ի, թրի բոլոր տեղերը
Ցույց ա տալիս մեզ, որ հենց իմանաս,
Թերերեց ըլի, էրված, խորովված,
Ջանումն էլ բնավ հեշ սաղ տեղ չկա:
Գլուն, երեսն, փորն հենց յարալու ա
(ընդգծումը մերն է՝ Լ.Ն., 3463-3468):

Մին տարի մի դարաչու կնիկ էկաւ
ասեց թե՛ ես օխտը տարի մարդագել եմ
ելել, ջանը բաց արեց, եարի տեղը շանց
տուեց-էդ էն եարեքն 'ին, որ մարդագել
վախտը թուանքով տուել 'ին: Մեր գեղումն
էլ մին կնիկ կէր, մարդագելի տարին
կ'ասին էն ա մարդագելը³²:

Մարդագայլերի մասին պատմող գերմանական շատ զրույցներում նրանք ճանաչվում են հենց սպիներից³³:

Մարդագայլերը կարող են խոսել մարդկային լեզվով³⁴:

Նկատենք մի ուշագրավ փաստ ևս. այս զրույցի արձագանքները հասել են մինչև 13-րդ դար: Մխիթար Գոշի առակներից մեկն ակնարկում է մարդագայլի մասին: Առակը «հուշում է», որ մարդագայլերն ունեցել են այլանդակ կերպարանք, և մարդիկ շատ են վախեցել նրանցից: Մայրերը երեխաներին հաճախ վախեցրել են մարդագայլերով³⁵: Այս փաստարկը հաստատվում է նաև նրանով, որ «Մարդագայլ» բառը

²⁹ Կ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, էջ 35:

³⁰ Հմմտ. 3. П. Соколова, Культ животных в религиях, ст. 105: «Считалось, что колдун превращает человека в волка на определенный срок, когда он истекает, тот снова превращается в человека, его отличительная черта-сросшиеся брови и красные глаза».

³¹ <http://www.pitt.edu/dash/werewolf.html>, - Werewolf legends, "A Witch as Werewolf".

³² Կ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, էջ 35:

³³ <http://www.pitt.edu/dash/werewolf.html>, - Werewolf legends, "Werewolves", "Werewolf of Klein-Krams", "Werewolves" / պատմեցին՝ Հակոբ և Վիլհելմ Գրիմ/

³⁴ ԷԱՀ, հ. ԻԵ, Թիֆլիս, 1914, էջ 58-59: Վասպուրական:

³⁵ Առակը Մխիթարայ Գոշի, Վենետիկ, 1854, էջ 142-143. «Յաղագս վայրապար շրջելոյ մանկանն, ասաց մայրն՝ եթէ մարդագայլ /ընդգծումը մերն է՝ Լ. Ն./ է որդեակ, արտաքոյ: Եւ ելեալ մանկանն, ետես զծեր ոմն

հայերեն առանձին բարբառներում ունեցել է նաև հասարակ անվան իմաստ. «Այդ հասկացողությամբ վիթխարի և անձոռնի մարդոց *գիլունի, մարդագէլ, մերէշաւէ* (գիշերային մարդ՝ ծան.՝ գրառողի) անունները կու տան»³⁶: Գրառված տարբերակներից մեկում ևս մարդագայլը ներկայանում է չափազանց տգեղ կերպարանքով. «Կէս գիշերին տեսել է մի *մարդագէլ*. գայլի մարմնով, մի աչքանի, մի ձեռք բահի, միւսը փայտատի նման: Յովսէփը զարգանդել է՝ կարծելով, թէ իսկոյն իրեն պիտի լափէ»³⁷:

«...Էդ գէլի խրխին կը հագնի, կը դառնայ *մարդագէլ*, իսկը գէլի նման- մեծմեծ ծծերը տակէն կախ»³⁸:

Հր. Աճառյանի վկայությամբ՝ Ղարաբաղի բարբառում «մարդագայլ» բառն ունի նաև «շատակեր» փոխաբերական իմաստը³⁹: Ուշագրավ է, որ Խ. Աբովյանի մոտ մարդագայլը չափազանց անկուշտ է, ինչը ևս կապված է անեծքի հետ.

Նա հենց էն սհաթը՝ որ խրխին հագավ
Աչքն արին կոխեց ու կատաղեցավ,
Մոված չէ՛ր, փորը խլվլոց ընկավ,
Էլ ո՛չ հաց, ո՛չ պտուղ, ո՛չ ուրիշ մսի համ
Աչքը չէր գալիս, հենց մարդի մսի
Ատամներն դրձտում ու ուզում էին (3416-3420):

Ըստ մեկ այլ ավանդության՝ Հարդագողի ճանապարհի առաջացումը կապվում է մարդագայլի հետ⁴⁰:

Մարդագայլի գերմաներեն, Աբովյանի մշակմամբ մեզ հասած, ինչպես նաև տարբեր ժամանակներում գրառված առատ նյութերի համեմատությունը հնարավորություն է տալիս պարզելու նաև առասպելի մշակման, «սազացման» Խ. Աբովյանի մոտեցումները: Ինչպես տեսանք, Խ. Աբովյանը առասպելի սյուժեին հարազատ է մնացել. անգամ առանձին մանրամասներ ճշտվում են նաև այլ ժողովուրդների բանավոր աղբյուրների համեմատությամբ:

Իսկ ինչպես է մշակված նյութը: Ինչպես նկատեցինք, «Աղասու խաղ»-ում գետեղված են զրույցի երկու տարբերակ, որոնց համադրումը գրառված նյութերի հետ թույլ է տալիս պարզել նաև Խ. Աբովյանի՝ բանահյուսական նյութերը գեղարվեստական մշակման ենթարկելու որոշ առանձնահատկություններ: Ուշադիր ընթերցումն ու համեմատությունը մեզ հուշում են, որ սյուժեին հարազատ մնալով՝ Աբովյանն այնուամենայնիվ որոշ միջամտություններ կատարել է: Զրույցի մեկ միտքը կամ նախադասությունը Խ. Աբովյանի մոտ դարձել է համագործ անդամների մի շղթա, ինչը պետք է համարել զրույցի գեղարվեստական մշակման առանձնահատկություններից մեկը.

Թե նրա խրխին էրելիս՝ *ջանը*
Հենց բռնես *շամփուր, մզրախ ևն կոխում*.

կորացեալ՝ շրջեալ աջօք, և կարծեալ *մարդագայլ*, անկաւ առ մայրնյ՝ և ասաց. Զէ ինչ հեռի ՚ի գայլոց՝ զի չգր էր ծերն: Ի դէպ է յառակս ուսանել, եթէ չէ ինչ պատուական ծերութիւն, յորժամ չարաբարոյ իցե՛:

³⁶ ԷԱՀ, հ. Զ, էջ 14:

³⁷ Նույն տեղում, հ. ԻԵ, էջ 58-59:

³⁸ Գ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, էջ 35:

³⁹ Հր. Աճառյան, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 716:

⁴⁰ ԷԱՀ, հ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 219: Վարանդա:

Աչքը կրակ տալիս, սիրտն էրվում, ճաքում:

Ուզում էր իրան իրան կտրատի (ընդգծումները մերն են-Լ. Հ., 3456-3459):

Խ. Աբովյանը խորացրել է նաև մարդագայլի հոգեկան տվյալտանքների նկարագրությունը, որն «Աղասու խաղ»-ում ծավալուն է (3438-3448): Մարդագայլը «Աղասու խաղ»-ում պատկերված է իր մտքերով և, ինչո՞ւ չէ՝ նաև տառապանքով, ինչը չենք տեսնում այս գրույցի գրառումներում:

Ում էրեխեքը կերել ա էն վախտն,

Անունները տեղ տեղ բոլոր եղ պատմում:

Թողություն խնդրում ու լալով ասում,

Թե ինքը չէր ուզում, խրխին էր անում /3445-3448/:

Արդյոք Աբովյանը մտադիր էր թողնե՞լ երկու տարբերակներն էլ, հայտնի չէ, քանի որ խաղն անավարտ է:

Վերոշարադրյալը հիմք է հետևյալ եզրակացությունների համար.

1. Խ. Աբովյանն «Աղասու խաղ»-ում օգտագործել է մի շարք ժողովրդական գրույցներ, ավանդություններ, որոնցից առավել ուշագրավը մարդագայլի մասին պատմող առասպելն է:
2. Մարդագայլի հայկական առասպելը, սյուժետային զուգահեռներ ունենալով սլավոնական, գերմանական ժողովուրդների համանուն գրույցների և հավատալիքների հետ, ունի նաև էական տարբերություններ, որոնք իրենց արտահայտությունն են գտել «Աղասու խաղ»-ում զետեղված առասպելի երկու տարբերակներում. սրանք ևս սյուժետային որոշ տարբերություններ ունեն:
3. Հարազատ մնալով առասպելի սյուժեին՝ Խ. Աբովյանը կատարել է որոշ փոփոխություններ, որոնք բխում են հյուսվածքի բանաստեղծական մշակման առանձնահատկություններից՝ մարդագայլի հոգեկան տվյալտանքների նկարագրությունը և առանձին հավելումներ:
4. «Աղասու խաղ»-ում ուշագրավ են նաև Ապրանքափոսի, սիրահարների քար դառնալու, արեգակի և լուսնի, անձրևաբեր վիշապների, չար ու բարի հրեշտակների մասին գրույցները և ավանդությունները, որոնք կարող են դառնալ այլ քննության նյութ: